Արձանագրություն N 3
ՋԿ-ԳՀԾՁԲ-22/6-Ն ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան

28 սեպտեմբերի 2022թ.

Մասնակցում էին՝
Հանձնաժողովի նախագահ՝ Վ. Օհանջանյանը (ԳԱՊ)
Հանձնաժողովի անդամներ Ս. Ասրյանը, Կ. Սարգսյանը, Ա. Սիմոնյանը և Ս. Ալեքսանյանը
Քարտուղար՝ Ս. Գալստյանը

Բանակցությունների վերաբերյալ

Ջրային կոմիտեի կարիքների համար ՀՀ Տավուշի մարզի Տավուշի ջրամբարի պատվարի վերականգնման աշխատանքների նախագծերի պատրաստման, ծախսերի գնահատման ծառայությունների ձեռքբերման ՋԿ-ԳՀԾՁԲ-22/6-Ն ծածկագրով ընթացակարգի 28.09.2022թ. ժամը 11:00-ին տեղի ունեցած գնի նվազեցման շուրջ բանակցություններին մասնակցում էր «Հայհիդրոէներգանախագիծ» ՓԲԸ-ի տնօրեն Ս. Ղազարյանը:

Գնահատող հանձնաժողովի նախագահ Վ. Օհանջանյանը բանակցությունների մասնակիցներին ներկայացրեց «Հայհիդրոէներգանախագիծ» ՓԲԸ-ի հայտով ներկայացված գնային առաջարկը:

Բանակցությունների ավարտին մասնակից «Հայհիդրոէներգանախագիծ» ՓԲԸ-ի կողմից նոր գնային առաջարկ չի եղել և հայտով ներկայացված գնային առաջարկը մնացել է անփոփոխ:

Հանձնաժողովի որոշումը

Բանակցությունների արդյունքում հանձնաժողովը որոշեց.

1. ՋԿ-ԳՀԾՁԲ-22/6-Ն ծածկագրով ընթացակարգի ընտրված մասնակից հայտարարել «Հայհիդրոէներգանախագիծ» ՓԲԸ-ին,

2. Հրապարակել հայտարարություն պայմանագիր կնքելու որոշման մասին,

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն՝ ՋԿ-ԳՀԾՁԲ-22/6-Ն ծածկագրով ընթացակարգի համար անգործության ժամկետ չի սահմանվում:

3. Պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարությունը հրապարակելուն հաջորդող չորրորդ աշխատանքային օրը ծանուցել ՋԿ-ԳՀԾՁԲ-22/6-Ն ծածկագրով ընթացակարգի ընտրված մասնակից «Հայհիդրոէներգանախագիծ» ՓԲԸ-ին՝ ներկայացնելով պայմանագիր կնքելու առաջարկը և պայմանագրի նախագիծը:

Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը հաստատելու մասին

Գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել ըստ անհրաժեշտության, որը տեղի կունենա Ջրային կոմիտեի վարչական շենքում, հասցեն՝ ք. Երևան, Վարդանանց 13ա, 400 սենյակ:

Ընդունվել է որոշում՝ կողմ-5, դեմ-0
Գնահատող հանձնաժողովի՝

Նախագահ	_____	Վ. Օհանջանյան
անդամներ	_____	Ս. Ասրյան
	_____	Գ. Մելիքսեթյան
	_____	Կ. Սարգսյան
	_____	Ա. Սիմոնյան
	_____	Ս. Ալեքսանյան
Քարտուղար	_____	Ս. Գալստյան